ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/71-Ք ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 25.10.2022թ. N 524/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.11.2022թ. ժամը 15-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում: Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Տ. Պետրոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամ՝ Լ. Միրզախանյանը և քարտուղար Ա. Քոթանջյանը: Բացակայումեր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Գ. Հախինյանը.

1" ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/71-Ք ծածկագրով գնման ընթացակարգի հետագա ընթացքի վերաբերյալ

- ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/71-Ք ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Տ. Պետրոսյանը տեղեկացրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 10.11.2022թ. թիվ- 03/26-1/19629-2022 գրությամբ (կցվում է), հայտնում է, որ 08.11.2022թ. ժամը 10:00-ից մինչև ժամը 16:30-ն էլեկտրոնային աճուրդների համակարգը աշխատել է խափանումներով, ինչի արդյունքում խոչընդոտվել է անցկացվելիք աճուրդների, այնպես էլ նշված ժամանակահատվածում հրավերներով հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանված ընթացակարգերին մասնակցության հայտերի ներկայացման բնականոն ընթացքը (խափանված չափաբաժինների և ընթացակարգերի ցանկը կցվում է): Միաժամանակ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնում է, որ ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջանաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:

2" Հանձնաժողովը որոշեց՝

- ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/71-Ք ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Տ. Պետրոսյան

Անդամներ՝ Լ. Միրզախանյան

Քարտուղար՝ Ա. Քոթանջյան